ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայն. Բյուրեղավան
Վազգեն Ա.Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12

29 օգոստոսի 2024 թվական

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ԹԻՎ 12 ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին համայնքի ավագանու 12 (տասներկու) անդամներ: Բացակա էին Ավագ Սահակյանը, Արշալույս Վարդանյանը և Աշխեն Մարուքյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը:

Նիստն արձանագրում էր համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պարտականությունները կատարող Նինա Մարկոսյանը:

Նիստին ներկա էին Բյուրեղավան համայնքի Ջրաբեր և Նուռնուս բնակավայրերի վարչական ղեկավարներ Բորիկ Դավթյանը և Աղվան Հարությունյանը, համայնքի ղեկավարի օգնական Աննա Մկրտչյանը, համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Տիգրան Հովսեփյանը, աշխատակազմի գլխավոր մասնագետ Սարգիս Ղազարյանը:

Մինչև նիստի օրակարգին անցնելը համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը հայտարարեց, որ ավագանու տասնհինգ անդամներից նիստին ներկա են 12-ը, նիստն իրավազոր է և առաջարկեց սկսել նիստը:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 29-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ԹԻՎ 12 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝ ***ավագանին որոշում է.***

Հաստատել Բյուրեղավան համայնքի ավագանու 2024 թվականի օգոստոսի 29-ի արտահերթ թիվ 12 նիստի հետևյալ օրակարգը՝

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2024 թվականի օգոստոսի 05-ի N 55-Ա որոշումն անվավեր ճանաչելու մասին:

2.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքը (Բյուրեղավան քաղաքը, Ջրաբեր և Նուռնուս բնակավայրերը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Կոտայք-3 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագիծը՝ գլխավոր հատակագծի և գոտևորման մասերով, հաստատելու մասին:

3.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 19-ի N 84-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ - 8 Դեմ - Ձեռնպահ - 4

Որոշումն ընդունված է. /որոշում N 58-Ա/

Օրակարգը հաստատվելուց հետո ավագանու նիստերի դահլիճից դուրս եկան ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» և «Արդար Հայաստան» խմբակցությունների անդամներ Վլադիմիր Վարդևանյանը, Ավագ Սահակյանը, Արշալույս Վարդանյանը, Աշխեն Մարուքյանը, Արմեն Սարգսյանը, Սոս Չիլինգարյանը և Վալենտինա Կաղիյանը:

<u>Լսեցին</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 05-Ի N 55-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԻՆԱ ՄԱՐԿՈՍՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի՝ ***ավագանին որոշում է.***

1.Անվավեր ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2024 թվականի օգոստոսի 05-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքը (Բյուրեղավան քաղաքը, Ջրաբեր և Նուռնուս բնակավայրերը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Կոտայք-3 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագիծը հաստատելու մասին» N 55-Ա որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ - 4

Որոշումն ընդունված է. /որոշում N 59-Ա/

<u>Լսեցին</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ (ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԸ, ՋՐԱԲԵՐ ԵՎ ՆՈՒՌՆՈՒՍ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ) ՆԵՐԱՌՈՂ ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԿՈՏԱՅՔ-3 ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՆԱԽԱԳԻԾԸ՝ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ԵՎ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՄԱՍԵՐՈՎ, ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՏԻԳՐԱՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14.4-րդ հոդվածի 7-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի հուլիսի 08-ի N 2-6 դրական եզրակացությունը՝ ***ավագանին որոշում է.***

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքը (Բյուրեղավան քաղաքը, Ջրաբեր և Նուռնուս բնակավայրերը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Կոտայք-3 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագիծը՝ գլխավոր հատակագծի և գոտևորման մասերով՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ - 4

Որոշումն ընդունված է. /որոշում N 60-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 84-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԻՆԱ ՄԱՐԿՈՍՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի՝ **ավագանին որոշում է.**

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու մշտական գործող հանձնաժողովներ ստեղծելու, դրանց կազմը հաստատելու մասին» N 84–Ա որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերության մեջ «Արմեն Հայրապետյան» բառերը փոխարինել «Սերգեյ Սարգսյան» բառերով.

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ - 4

Որոշումն ընդունված է. /որոշում N 61-Ա/

Օրակարգի հարցերը սպառվեցին:

Աշխատակազմի քարտուղարի պարտականությունները կատարող Նինա Մարկոսյանը հրապարակեց, որ, ի պատասխան աշխատակազմի քարտուղար Լ. Ավուշյանի կողմից ներկայացրած բացակայությունների մասին տեղեկանքների, Բյուրեղավան համայնքի ավագանու «Արդար Հայաստան» խմբակցության ղեկավար Արմեն Սարգսյանը ներկայացրել է իր և խմբակցության ավագանու անդամներ Սոս Չիլինգարյանի և Վալենտինա Կաղիյանի բացակայության պատճառները:

2024թ. օգոստոսի 19-ին ներկայացրած գրությամբ նա հայտնել է, որ նիստերին չմասնակցելը պայմանավորված է եղել առողջական, աշխատանքային, հանգստի նպատակով համայնքից բացակայելով՝ նշելով, որ անհրաժեշտության դեպքում կարող են ներկայացնել նշված հիմնավորումների հիմքերը:

Ավագանու նիստն ավարտվեց:

Ավագանու նիստն ավարտվեց:

Ավագանու անդամներ՝

ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ _____

ԴԱՆԻԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ _____

ԱՐՓԻՆԵ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ _____

ԷԴԻԿ ՊԻՃԻԿՅԱՆ _____

ԿԱՐԱՊԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ԱՐԳԱՄ ՇԱՌՅԱՆ _____

ՍԵՐԳԵՅ ՍԱՐԳՍՅԱՆ _____

ՎԱՐԴԱՆ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ _____

ՎԼԱԴԻՄԻՐ ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ _____

ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ _____

ՎԱԼԵՆՏԻՆԱ ԿԱՂԻՅԱՆ _____

ՍՈՍ ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ